

ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԲԱՌԱՅԻՆ  
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ABSTRACT

LEXICAL PECULIARITIES OF DIPLOMATIC DOCUMENTS

In the case of a functional study of legal texts, from a legal point of view, it is necessary to group the texts depending on how the content affects the choice of words. This approach proceeds from the definition of the main categories of the text in modern linguistics, from the logical framework of its structural and content peculiarities.

The paper aims at revealing some lexical peculiarities inherent in the register of legal and diplomatic texts and provides a general review of the main approaches to the study of the given register.

*Key words: the correlation of law and language, diplomatic documents, Legal linguistics.*

РЕЗЮМЕ

ЛЕКСИЧЕСКИЕ ОСОБЕННОСТИ ДИПЛОМАТИЧЕСКИХ ДОКУМЕНТОВ

В случае функционального исследования юридических текстов, с юридической точки зрения, необходимо сгруппировать тексты в зависимости от того, как содержание влияет на выбор слов. Такой подход исходит из определения основных категорий текста в современной лингвистике, из предметно-логической основы его структуры. Статья направлена на выявление некоторых лексических особенностей, присущих регистру юридических и дипломатических текстов, и дан общий обзор основных подходов к изучению данного регистра.

*Ключевые слова: Право-языковые отношения, дипломатические документы, юридическая лингвистика.*

## ԱՄՓՈՓՈՒՄ

Իրավաբանական տեքստերի գործառական ուսումնասիրման դեպքում իրավական տեսանկյունից անհրաժեշտ է խմբավորել տեքստերը՝ կախված այն բանից, թե ինչպես է բովանդակությունը ազդում բառերի ընտրության վրա: Նման մոտեցումը բխում է ժամանակակից լեզվաբանության մեջ առկա տեքստի հիմնական կարգերի սահմանումներից և դրա կառուցվածքի առարկայա-տրամաբանական հիմքից: Հոդվածի նպատակն է բացահայտել իրավաբանական և դիվանագիտական տեքստերին բնորոշ որոշ բառապաշարային առանձնահատկություններ:

*Բանալի բառեր՝ Իրավունք-լեզու փոխհարաբերություն, դիվանագիտական փաստաթղթեր, Իրավալեզվաբանություն:*

Լեզվաբանության արդիական խնդիրներից մեկը տեքստի ճիշտ կառուցումն ու ընկալումն է՝ ելնելով դրա շարահյուսական և ոճագործառական առանձնահատկություններից: <<Տեքստ>> եզրույթն իր մեջ ներառում է հարափոփոխ մի երևույթ՝ լեզվաբանական մտքի զարգացումներին համապատասխան: Տեքստն ունի տարբեր գործառույթներ. օրինակ՝ լեզվական մի տիրույթում տեքստը կարող է իրականացնել հաղորդակցման գործառույթ, իսկ մեկ ուրիշում՝ ներգործման գործառույթ:

Արդի լեզվաբանության մեջ տեքստն ունի դիտարկման տարբեր մոտեցումներ՝ ելնելով լեզվի տարբեր գործառույթներից: Եվ քանի որ այն լիարժեք ընկալելու համար մեկ մոտեցմամբ ուսումնասիրելը բավարար չէ, առաջանում է գործառական ոճերին պատկանելիության կարևորությունը:

Իրավական փաստաթղթերի լեզուն հաճախ անկատար է. Մի կողմից, այն ունի խիստ պաշտոնական կառուցվածք, մյուս կողմից՝ իրավաբանի «չոր լեզուն» միշտ չէ, որ համապատասխանում է արդիականության պահանջներին: Ներկայումս, գիտելիքի այնպիսի ոլորտները, ինչպիսիք են իրավալեզվաբանությունը և լեզվաիրավաբանությունը, ակտիվորեն զարգանում են, քանի որ լեզվի գրագիտության, իրավական ակտերի ճշգրտության և հուսալիության հարցն այսօր ավելի հրատապ է: Իրավաբանական և լեզվական ուսումնասիրությունների ընդհանուր առմամբ ընդունված առարկան լեզվական և իրավունքի

փոխհարաբերությունն է՝ լեզու-իրավունքի հարաբերակցությունը ուսումնասիրում է լեզվահրավաբանությունը, իրավունք-լեզու փոխհարաբերությունը՝ իրավալեզվաբանությունը: Լեզվի իրավական կողմը այն «բնական» արտահայտություններն են, որոնք «ինքնըստինքյան» պարունակում են օրենքի տարրեր, որոնցից յուրաքանչյուրի մեջ կարելի է գտնել իրավականցման պոտենցյալներ:

Լեզվաբանության մեջ իրավաբանական փաստաթղթերը ուսումնասիրվում են որպես պաշտոնական ոճի նմուշներ, որոնք կիրառվում են վարչական-իրավական ոլորտում: Խոսելով «իրավաբանական տարատեսակության», «սահմանադրական ոճի», «իրավաբանական փաստաթղթերի լեզվի» մասին՝ լեզվաբանները նկատի ունեն օրենքների կամ դիվանագիտական ակտերի տեքստերը: Դրանց ուսումնասիրման մեջ ձևավորվել է որոշակի գիտական ավանդույթ: Նախ և առաջ՝ դրանք դիտարկվում են ծագումնաբանության և բառային կազմի տեսանկյունից: Օրինակ՝ սլավոնական հին գրավոր հուշարձաններում իրավական տերմինաբանության ծագումնաբանական վերլուծությունը օգնել է եզրահանգումներ անելու նախասլավոնական հիմնական լեզվի անկման և սլավոնական լեզուների ձևավորման մասին (Алексеев, 1978): Այնուհետև՝ լեզվաբանները դրանք ուսումնասիրում են իմաստաբանական և քերականական օրինաչափությունների սահմանման նպատակով, որոնք հատուկ են լեզվի պատմության որոշակի դարաշրջանի համար (Дерягин, 1936): Եվ վերջապես՝ շատ հետազոտողներ զբաղվում են պաշտոնական ոճի լեզվական գծերի բնութագրմամբ, որոնք արտացոլված են օրենքների տեքստերում կամ դիվանագիտական փաստաթղթերում (Ивакина, 1982):

Լեզվաբանները սահմանել են «իրավաբանական ենթալեզվի» ընդհանուր գծերը՝ հստակություն, կարգադրականություն, ոչ անձնական բնույթ, ստանդարտացում, անվանական բնույթ: Չխորանալով իրավունքի տեսանկյունից իրավաբանական տեքստերի առկա դասակարգման մեջ՝ լեզվաբանները դրա հետ մեկտեղ նկատում են, որ սահմանադրական և դիվանագիտական փաստաթղթերը տարբերվում են միմյանցից ոճական առումով:

Օրենքների լեզուն համարելով գրասենյակային ոճի տարատեսակության հիմք՝ Լ. Շչերբան գրում է, որ «գրասենյակային ոճի տարատեսակության հիմնական

խնդիրն է ներկայացնել գործի բոլոր հանգամանքները դրանց բոլոր տրամաբանական փոխհարաբերությունների մեջ՝ դրանցից բխող եզրահանգումների հետ միասին՝ որպես մեկ ամբողջություն: Այստեղից էլ բխում է բարդ նախադասությունների մշակույթը... Եթե նման բարդ նախադասությունը ներկայացվի մեկը մյուսից անկախ տարրերի տեսքով, ապա ընթերցողից շատ ժամանակ և եռանդ կպահանջվի այդ տարրերը մեկ տրամաբանական ընդհանուրի մեջ միավորելու և համապատասխան եզրահանգումներ անելու համար: Օրենքների լեզուն պահանջում է հստակություն և բացառում է ամեն մի թյուր մեկնություն» (Илгерда, 2004): Որքան էլ բարդ և անսովոր լինեն նորմատիվ ակտերում (օրենքներում) կիրառվող լեզվական կառույցները, ընթերցողը չի ձգտում դրանք պարզեցնել, այլ դրանց անդրադառնում է մի քանի անգամ, որ միանշանակ կերպով մեկնաբանի օրենսդրի կամքը: Այդ առումով օրենսդրական փաստաթղթերը, ի տարբերություն դիվանագիտական փաստաթղթերի, առավել սահմանափակ են շատ լեզվական միջոցների կիրառման մեջ:

Դիվանագիտությունը (հունարեն «դիպլոմատիա»՝ երկտակ ծավլած գրություն, փաստաթուղթ) ձևավորվել է միջպետական հարաբերությունների առաջացմանը զուգընթաց: Դիվանագիտությունը միջոց է (կամ գործիք)՝

- միջպետական փոխհարաբերությունների ապահովման, այլև կայացման,
- պետական շահի պաշտպանությանը միտված իրականացվող գործնական քաղաքականությանը սպասարկման,
- պետական կազմավորումների միջև իրականացվող արտաքին քաղաքականության արդյունավորման կամ հնարավորության:

Դիվանագիտական ենթառձի հեղինակը պետությունն է կամ պետության ներկայացուցիչը՝ դեսպան, պատվիրակության անդամ, նախագահ: Դիվանագիտական կապերի հասցեատերը մյուս պետությունն է: Դրա նպատակը երկու պետությունների միջև դիվանագիտական հարաբերությունների հաստատումն է: Այս ենթառձին են պատկանում պայմանագիրը, դիվանագիտական նամակը և այլն: Դիվանագիտության լեզուն ունի իր առանձնահատկությունը: Այն ունի իր

պայմանների համակարգը, որոնց մեծ մասը ընդունվում է միջազգային մակարդակով:

Դիվանագիտական տերմինաբանության մեջ հաճախ հանդիպում են հետևյալ բառերը՝ high contracting parties; to ratify an agreement; memorandum; pact; Charge d'affaires; protectorate; extraterritorial status; plenipotentiary:

Նաև դիվանագիտության լեզուն բնութագրվում է լատինական և ֆրանսիական ծագման բառերի օգտագործմամբ, որոնք ձեռք են բերել նոր տերմինաբանական երանգավորում դիվանագիտական փաստաթղթերի լեզվով: Առավել օգտագործված բառերի և արտահայտությունների շարքում կա հետևյալը՝ commence (սկսել) – և ոչ թե begin, conclude (ավարտել) – և ոչ թե end:

Դիվանագիտական փաստաթղթերում հնարավոր են արտահայտչականությունը և փոխաբերականությունը, որոնք մոտեցնում են դիվանագիտության լեզուն հրապարախոսության լեզվին: Դիվանագիտական փաստաթղթերում կարևոր է ընդգծել արտաքին քաղաքականության հատուկ նշանակությունը, արտահայտել դիվանագիտական բարդ վարքականոնը: Այդ իսկ պատճառով դիվանագիտական փաստաթղթերը բնութագրվում են լեզվական միջոցների ընտրության առավել ազատությամբ:

Այսպիսով, օրենսդրական և դիվանագիտական փաստաթղթերի նկատմամբ լեզվաբանական մոտեցումը կառուցվածքային է. ուսումնասիրվում են որոշակի լեզվական ձևերը, որոնք գտնվել են լեզվական նյութի տվյալ տեսակում, լեզվի առանձին փաստեր, որոնք արտացոլված են մասամբ օրենքներում կամ դիվանագիտական փաստաթղթերում: Գործառական առումով, այսինքն՝ որպես ամբողջական տեքստեր, որոնք կիրառվում են իրավական ոլորտում և ունեն լեզվական հատուկ ձևավորում՝ իրավունքի և լեզվի նորմերի փոխազդեցությամբ, իրավաբանական տեքստերը քիչ են ուսումնասիրվել: Դա արտահայտվում է նրանում, որ ժամանակակից լեզվաբանության մեջ չկա իրավաբանական տեքստերի լեզվաբանական դասակարգում: Մինչդեռ հատկապես գործառական մոտեցումը կարող է արդյունավետ լինել, քանի որ այն կօգնի իրավաբանական տեքստերի լեզվական առանձնահատկության նկատմամբ գիտակցված մոտեցմանը և տիպական սխալների կանխմանը:

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Алексеев Ю.Г.** (1973), Статьи о "Вдачестве": Опыт терминологического анализа древнерусских юридических текстов. - В кн.: Вспомогательные исторические дисциплины. 9. Л., 1978, с. 148-173; Топоров В.Н. О двух праславянских терминах из области древнего права в связи с индоевропейскими соответствиями. - В кн.: Структурно-типологические исследования в области грамматики славянских языков. М., с. 118-139
2. **Дерягин В.Я.** (1936), Лексико-семантический анализ группы деловых текстов. В кн.: Памятники русского языка: Вопросы исследования и издания. М., 1974, с. 202-223; Ларин Б.А. Лекции по истории русского литературного языка /X-сер. ХУШ вв./. - М.: Высш. школа, 1975. - 327 с.; Обнорский С.П. Язык договоров русских с греками. - В кн. Язык и мышление. Вып. 6-7. М.-Л., с. 79-103.
3. **Ивакина Н.Н.** (1973), Совмещение элементов научной и официально-деловой речи в синтаксисе юридического документа. - В кн.: Язык и стиль научного изложения. М., 1983, с. 45-59; Логинова К.А. О лексико-стилистических особенностях языка воинских уставов. - В кн.: Проблемы журналистики, вып. 2, с. 64-67; Олейник С.П. Язык Конституции СССР в коммуникативно - синтаксическом аспекте. - В кн. Вестн. Харьк. политехи, ин-та, 1982, № 192, вып. I, с. 3-6
4. **Щерба Л.В.** (2004), Современный русский литературный язык, с. 119.

**Չարապետյան Մարիամ** - դասախոս, ԵՊՀ եվրոպական լեզուների և հաղորդակցության ֆակուլտետ, անգլերենի թիվ 1 ամբիոն, էլ. փոստ՝ [mariam.karapetyan@ysu.am](mailto:mariam.karapetyan@ysu.am):

Ներկայացվել է խմբագրություն՝ 16.11.20, տրվել է գրախոսության՝ 23.11.20 - 30.11.20, երաշխավորվել է ԵՊՀ եվրոպական լեզուների և հաղորդակցության ֆակուլտետի անգլերենի թիվ 1 ամբիոնի կողմից, ընդունվել է տպագրության՝ 18.12.20: